

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ | 2014

---

Ստեփանակերտի քաղաքապետարանի  
գործունեության

2014 թվականին ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն իր գործունեությունն իրականացրել է ԼՂՀ սահմանադրության, «ԼՂՀ շրջաններում պետական կառավարման մասին» ԼՂՀ Նախագահի հրամանագրի և «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի հիման վրա:

Քաղաքապետարանի 2014 թվականի գործունեության համար գլխավորապես ծրագրային հիմք են հանդիսացել՝

- ԼՂՀ նախագահի նախընտրական ծրագիրը,
- ԼՂՀ կառավարության գործունեության ծրագիրը,
- ԼՂՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանի կողմից իրականացվող գործունեությունն ուղղված է եղել բնակչության բարեկեցության բարելավման նպատակով համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի սեփականության տնօրինմանը:

Քաղաքապետարանի կողմից իրականացված միջոցառումները միտված էին օրենքով նախատեսված պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմանը հետևյալ բնագավառներում՝

- ֆինանսներ,
- քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
- հողօգտագործում,
- տրանսպորտ,
- աշխատանք և սոցիալական ծառայություն,
- առևտուր և ծառայություններ,
- հասարակական կարգի պահպանություն,
- պաշտպանություն,
- քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն,
- կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,
- ֆիզիկական կուլտուրա և սպորտ,
- արտաքին կապեր:

### **Ֆինանսներ**

Ստեփանակերտի քաղաքային համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր մուտքերը կազմել են 1299545.6 հազ.դրամ՝ պլանավորված 1338702.6 հազ.դրամ գումարի 97.1%-ը: Ընդհանուր մուտքերի 28.9%-ը կազմել են սեփական եկամուտները, որոնց գծով պլանավորված 413370.0 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 375785.6 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 90.9 %: Նախորդ տարվա համեմատ սեփական եկամուտները նվազել են 12128.7 հազ.դրամով: Միննույն ժամանակ, կայացած դատական վճիռների համաձայն վճարման է ենթակա 17264.6 հազ.դրամ:

Շենքերից և շինություններից գանձվող գույքահարկի գծով մուտքերը կազմել են 110108.6 հազ.դրամ՝ նախատեսված 117000.0 հազ.դրամի 94.1%-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերը նվազել են 335.7 հազ.դրամի չափով /շենքեր և շինությունների մասով 6726.2 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում/: Հողի հարկից գանձվող մուտքերը կազմել են 10287.4 հազ.դրամ՝ պլանավորված 14070 հազ.դրամի 73.1 %-ը /հողի հարկի մասով 1355.2 հազ.դրամի չափով չվճարված հարկի նյութերը գտնվում են դատարանում/:

Փոխադրամիջոցներից մուտքագրվել է 121896.7 հազ.դրամի գույքահարկ, որը կազմում է պլանավորված 133000.0 հազ.դրամի 91.7 %-ը: Նախորդ տարվա համեմատ այն աճել է 2321.3 հազ.դրամի չափով /փոխադրամիջոցների մասով՝ 8273.7 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում/:

Տեղական տուրքերի գծով մուտքագրվել է 61798.0 հազ.դրամ, որը կազմում է նախատեսված 59000.0 հազ.դրամի 104.7 %-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերն աճել

են 5384.6 հազ.դրամով կամ 9.5%-ով: Պետական տուրքերի գծով մուտքագրվել է 16068.3 հազ.դրամ՝ պլանավորված 20500.0 հազ.դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 78.4 %: Այլ հարկային եկամուտների գծով մուտքագրվել է 6107.3 հազ.դրամ և կատարողականը կազմել է 81.4%:

Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների 71.1%-ը կազմել են պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները: 2014թ. տարեկան բյուջեի պլանավորված դոտացիայի և սուբվենցիայի գումարները կազմել են 925332.6 հազ.դրամ, որից հատկացվել է 923760.0 հազ.դրամ /կատարողականը կազմում է 99.8%/: Նախորդ տարվա համեմատ հատկացված գումարը աճել է 262760.0 հազ.դրամի չափով: Այլ եկամուտների գծով 2014թ. մուտքագրվել է 49519.2 հազ.դրամ՝ պլանավորված 62300.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 79.5%/:

Հողերի վարձակալության մասով համայնքային բյուջեի եկամուտները կազմել են 7055.9 հազ.դրամ, պլանավորված 13600.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 51.9%/: Գույքի վարձակալությունից եկամուտների կատարողականը կազմել է 103.0% կամ հավաքագրվել է 5147.6 հազ.դրամ՝ նախատեսված 5000.0 հազ.դրամի դիմաց: Հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների մուտքերը կազմել են 5330.9 հազ.դրամ՝ 4200.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 126.9%/: Վարչական գանձումներից մուտքերը կազմել են 27021.9 հազ.դրամ՝ 24500.0 հազ.դրամի դիմաց, կամ աճը կազմել է 10.3%, իսկ տուգանքներից և տույժերից մուտքերը՝ 2796.8 հազ.դրամ՝ 10000.0 հազ.դրամի դիմաց /կատարողականը կազմել է 28.0%:

Քաղաքային համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեի ծախսերը ֆինանսավորվել են 1300486.4 հազ.դրամի չափով, որը կազմում է պլանավորված 1350577.0 հազ.դրամի 96.3%-ը: Համայնքի ենթակայության կազմակերպությունները ֆինանսավորվել են 99.9%-ով:

### **Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն**

2014թ. ընդունվել է քաղաքաշինության բնագավառին առնչվող 1450 որոշում: Շինարարության նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձերին տրամադրվել է թվով 470 թույլտվություն: Նշված ժամանակաշրջանում քաղաքացիներին միաժամանակ տրամադրվել է 186 ավարտական ակտ և քանդման վերաբերյալ թվով 45 թույլտվություն: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի և շինարարության ավարտման աստիճանի վերաբերյալ պատրաստվել է 57 տեղեկանք: Հրավիրվել է Ստեփանակերտի վարչական սահմաններում գտնվող ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակը որոշող հանձնաժողովի 13 նիստ, որտեղ քննարկվել է 82 հարց: Տեղի է ունեցել Ստեփանակերտի քաղաքապետարանին կից գործող ճարտարապետական և քաղաքաշինական խորհրդի 9 նիստ, ուր քննության է առվել 42 հարց:

Հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ Ստեփանակերտ քաղաքում՝ բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ, հասարակական նշանակության շինարարություն իրականացնող թվով 17 սուբյեկտների մասով իրականացվել են ստուգումներ՝ քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման վերաբերյալ: Քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կապալառուներին տրվել են պարտադիր կատարման հրահանգներ և ցուցումներ: Հաստատվել են պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված օբյեկտների շինարարության շահագործման թվով 35 փաստագրման ակտեր: Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետները

խախտած 363 սուբյեկտներ գրավոր ծանուցվել են տրամադրված շինարարության թույլտվությունների ժամկետների երկարաձգման կամ ավարտական ակտերի ձևակերպման մասին:

2014թ. Ստեփանակերտի քաղաքային համայնքի բյուջեի և պետական բյուջեի հաշվին կատարվել են վերանորոգման, վերակառուցման և բարեկարգման զգալի աշխատանքներ: Այդ թվում՝ իրականացվել են 24580.1 հազ.դրամի չափով բազմաբնակարան շենքերի ճակատային մասերի հարդարման և երեսապատման, սալիկների վերականգնման աշխատանքներ: Մասնավորապես վերանորոգվել են Ստեփանակերտի ավտոկայանի շենքի ճակատային մասը, Ազատամարտիկների փողոցի N 31 շենքի պատշգամբները:

26883.0 հազ.դրամի չափով գումար է ծախսվել ջրահեռացման, ջրատարների և կոյուղագծերի համակարգերի վերանորոգման համար: Գ.Լուսավորիչ փողոցի N67 և N69 տների շրջապատում, մանկական խաղահրապարակի բարեկարգման նպատակով ծախսվել է 15410.0 հազ.դրամ, իսկ Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանի վերակառուցման և հարակից տարածքի բարեկարգման համար՝ 33800.0 հազ.դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում պատվիրվել են 4875.0 հազ.դրամի նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ Վ.Սարգսյան փողոցի N1 և N3 շենքերի շրջակայքում հասարակական նշանակության օբյեկտների կառուցման, Ազատամարտիկների փողոցի N31 շենքի պատշգամբների և ճակատային մասի վերականգնման և Գարեգին Նժդեհ փողոցի N2 տան դիմացի հեղեղատար կոյուղու ցանցի վերակառուցման նպատակով: Համայնքային բյուջեի միջոցների հաշվին <<Ակադեմիկոս Թախթաջյանի անվան Բուսաբանական այգի>> ՓԲ ընկերության տարածքում իրականացվել է 4000.0 հազ.դրամի չափով ջերմոցի կառուցման աշխատանք: Ստեփանակերտ քաղաքի Առաքելյան փողոցի հեղեղատար կոյուղու վերակառուցման II փուլի աշխատանքների համար ծախսվել է 4592.0 հազ.դրամի, իսկ Գարեգին Նժդեհ փողոցի N30 տան դիմացի հենապատի վերանորոգման համար՝ 3200.0 հազ.դրամի գումար: Քաղաքի տարբեր թաղամասերում իրականացվել են 4635.7 հազ.դրամի չափով ասֆալտապատման աշխատանքներ:

2014թ. շարունակվել են քաղաքի փողոցների բարեկարգմանն ու կառուցապատմանը, ջրամատակարարման ապահովմանն ուղղված ծավալուն աշխատանքները, իրականացվել տարբեր ծրագրեր: Շահագործման են հանձնվել մի շարք բնակելի շենքեր, կրթամշակութային և կենսական նշանակության շինություններ: Մայրաքաղաքում վերաբացվել է Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի հիմնանորոգված մասնաշենքը: Սովորողների առաջ իրենց դռներն են բացել հի 1 և 6 հիմնական դպրոցները: <<Արցախ>> նորակառույց թաղամասում տեղադրվել է գեներալ Անատոլի Զիննիչի, իսկ Մարտունի փողոցում՝ Ալեքսանդր Մյասնիկյանի մարմարակերտ հուշարձանը:

Բնակարանային խնդիրը մայրաքաղաքում շարունակում է առաջնահերթ մնալ: 2014թ. հրավիրվել է քաղաքապետարանի՝ բնակարանային հարցերով հանձնաժողովի 6 նիստ : Կայացել է Ստեփանակերտ քաղաքում քաղաքացիների հաշվառման և հաշվառումից հանելու հարցերով հանձնաժողովի 48 նիստ, որտեղ քննարկվել է 627 դիմում: Հաշվառման ցուցակում ընդգրկված են Արցախյան պատերազմի զոհված ազատամարտիկների թվով 35 և Արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդամների՝ 13 ընտանիքներ: Հաշվետու ժամանակահատվածում ոչ բնակելի տարածքի հատկացման վերաբերյալ ընդունվել է 11 որոշում, սեփականաշնորհվել 55 բնակարան: Համայնքի ավագանու համաձայնությամբ մասնավորեցվել է 5 օբյեկտ, վարձակալության է տրվել թվով 7 ոչ բնակելի տարածք:

Արտոնյալ բնակհաշվառման հերթացուցակներում քաղաքացիներին ընդգրկելու, օրենսդրական դաշտը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է ԼՂՀ ՊՊԿ 1993թ.

դեկտեմբերի 9-ի «ԼՂՀ-ում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգի մասին» N 344 որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ: Քաղաքապետարանը առաջարկություններ է ներկայացրել ԼՂՀ կառավարություն և ընթացիկ տարում նախատեսվում է համապատասխան որոշման ընդունումը:

Իրավունքների պետական գրանցում ստանալու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել և ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել ու պետական գրանցում ստացել պետական և համայնքային գույք հանդիսացող 139 միավոր: Միաժամանակ օտարվել է նախկինում կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի 47 միավոր: Համապատասխան որոշումներ են ընդունվել Տիգրան Մեծ, Գևորգ Չաուշ, Վ.Բրյուսով, Հովհ.Թումանյան փողոցների, նրանց նրբանցքների և փակուղիների վերահասցեավորման կապակցությամբ:

2014թ. մասնակի բավարարվել են բնակչության պահանջները՝ տների տանիքների վերանորոգման վերաբերյալ: «Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ կողմից ընթացիկ վերանորոգման են ենթարկվել 265 բազմաբնակարան շենքերի տանիքներ, տեղադրվել են 500 գծ/մ. ցինկապատ անձրևաջրահեռացման խողովակներ ու ջրհորդաններ: 975 բնակարաններում մաքրվել են ծխնելույզներն ու օդափոխիչ ուղիները: Պարբերաբար իրականացվել են բազմաբնակարան շենքերի և մուտքերի, ինչպես նաև նկուղիների մաքրման աշխատանքներ: Միննույն ժամանակ բնակչահագործման տնտեսությանը չի հաջողվում լիարժեք իրականացնել իր լիազորությունները: Մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրված գումարները հիմնականում ուղղվում են բակային հավաքարարների աշխատավարձերի վճարմանը, ինչը պետբյուջեից ֆինանսավորվում է ընդամենը 15%-ի չափով: Մինչդեռ «Սանմաքրում» կազմակերպության և «Բուսաբանական այգի» ընկերության բանվորները պետական բյուջեից ֆինանսավորվում են 100%-ով:

«Ստեփանակերտի համայնքային ծառայություն» ՓԲԸ-ն 2014թ. աշխատանքներ է իրականացրել համայնքի կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների մասով՝ տեղեկատվության խմբագրման, հաշվառման բազայի վարման, ներքաղաքային երթուղիների երթակարգավորման ծառայության, համայնքում հասցեավորման և հասցեների գրանցման գործառույթների վերաբերյալ: Համաձայն հաստատված ֆինանսական պլանի, ջրամատակարարման-ջրահեռացման ծառայության գծով նախատեսված 310.000 հազ. դրամի փոխարեն «Ջրմուղ-կոյուղու» կողմից հավաքագրվել է 371452.9 հազ.դրամ կամ առաջադրանքն կատարվել է 119.8 տոկոսով: Բնակչահագործման ծառայության գծով նախատեսված 120.782.6 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 110.995.9 հազ.դրամ, ինչը կազմում է նախատեսվածի 92.0%-ը: Աղբահանման ծառայության գծով 137.912.9-ի փոխարեն հավաքագրվել է 136005.3 հազ.դրամ, կամ առաջադրանքն կատարվել է 98.6 տոկոսով:

Ծառայությունն իր գործառույթների շրջանակում կատարել է նաև հասցեավորման և հասցեների գրանցման հետ կապված աշխատանքներ, ինչը թույլ է տվել բազան համալրել գույքային նոր միավորներով: 2014թ. վերահասցեավորվել և կանոնակարգվել են Տիգրան Մեծ փողոցի, Տիգրան Մեծ նրբանցքի, Տիգրան Մեծ 1-ին, 2-րդ փակուղիների, Հովհ.Թումանյան փողոցի նրբանցքի 1-ին, 2-րդ և 3-րդ փակուղիների, Վ.Բրյուսով փողոցի, Վ.Բրյուսով 1-ին և 2-րդ նրբանցքների, Վ.Բրյուսով 1-ին, 2-րդ փակուղիների, Գ.Չաուշ փողոցի փակուղու անշարժ գույքի, ինչպես նաև Կնունյանցների հհ 11, 13 և Մարտունի հ 59 շենքերի հասցեները:

Հաշվետու ժամանակաշրջանում <<Ջերմային տնտեսություն>> ՓԲ ընկերությունը <<Ձմեռ>> ծրագրի շրջանակներում ապահովել է իր կողմից սպասարկվող կաթսայատների անխափան աշխատանքը: 2014 թվականին մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի հի 1,2, 7, 10 դպրոցներում, հ 2 մանկապարտեզում, վերափոխվել է հ 34 կաթսայատնից մինչև հ 10 դպրոց տանող ջերմուղին: Հաշվի առնելով վերջին տարիների բնակլիմայական պայմանները, ինչպես նաև ելնելով ջեռուցման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից, առաջարկություն է ներկայացվել ԼՂՀ կառավարություն ջեռուցման ժամանակաշրջանը Ստեփանակերտ քաղաքում՝ 120 օրից դարձնել 150 օր:

2014թ. ուշադրության կենտրոնում են գտնվել և մայրաքաղաքի սանիտարական մաքրության ապահովմանը միտված աշխատանքները: Համայնքի տարբեր տարածքներում կառուցվել են թվով 12 նոր աղբահարթակներ, տեղադրվել 160 աղբարկղներ, վերանորոգման են ենթարկվել նախկինում կառուցվածները: Շաբաթօրյակների միջոցով քաղաքի տարբեր թաղամասերում, հատկապես ծայրամասերում, իրականացվել են արդյունավետ աշխատանքներ: Քաղաքի սանիտարական վիճակը բարելավելու նպատակով, Ստեփանակերտի և Երևանի քաղաքապետարանների համագործակցության շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպությանը՝ նվիրատվության կարգով տրամադրվել են մեկ խոտհնձիչ և թփեր ձևավորող տեխնիկա: Ձմռան նախապատրաստման աշխատանքների շրջանակում պահեստավորվել է անհրաժեշտ քանակությամբ աղ և ավազ:

2014թ. <<Ջրմուղ-կոյուղի>> ՓԲԸ գործունեությունը նպատակաուղղված է եղել Ստեփանակերտ քաղաքի բնակչության ջրամատակարարման և կոյուղու ցանցերի սպասարկման ծառայության որակի բարձրացմանը: Քաղաքի բնակչության 99.0%-ը ապահովված է շուրջօրյա ջրով: Ներկա դրությամբ ջրացանցի ապահովման աշխատանքները լիովին չեն ավարտված 3-րդ գոտում /Աջափնյակ/, Սարին թաղում, Բարեպաշտ և Կրկեման թաղամասերի որոշ հատվածներում:

Բնակլիմայական պայմանների տեսանկյունից չնայած տարին անբարենպաստ էր, այնուամենայնիվ, ընկերությանը հաջողվել է աննախադեպ երկարատև երաշտի պայմաններում ապահովել ջրի անխափան մատակարարումը բնակչությանը: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են շուրջ 4440 ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարավերացման աշխատանքներ՝ ինչպես ներքաղաքային ջրացանցում, այնպես էլ ներքաղաքային կոյուղու ցանցում, կոյուղու և բազմաբնակարան շենքերի ներքին ջրացանցերում: Ջրառների, գոտի կայանների, ջրատարների, ՕԿՁ-ի, արտեզյան հորերի և պոմպերի, ներքաղաքային ջրացանցի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հունվար-դեկտեմբեր ամիսներին, ըստ նորմերի, նմուշահանվել և հետազոտվել են <<Մեղրագետի>> և <<Թրագետի>>, <<Վարարակնի>>, <<Ծարավ աղբյուրի>>, <<Երեք ծորակի>>, <<Քար աղբյուրի>> և <<Կարմիր աղբյուրի>> ջրերը: Կապված ջրի որակի հետ, լաբորատորիայի կողմից իրականացվել են թվով 100 առողջարարական միջոցառումներ: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ ամեն օր, լրացուցիչ կազմակերպվել է ինչպես ՕԿՁ-ի, այնպես էլ՝ աղբյուրների ախտահանում և վարակազերծում:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերության կողմից իրականացվել են 33937,7 հազար դրամի կապիտալ և ընթացիկ նորոգումներ: Որպես ընկերության գործունեության ծավալման հայեցակարգային ելակետ, 2015թ. նախատեսվում է շուրջօրյա ջրամատակարարման և կոյուղու սպասարկման ծառայությունների մատուցման որակի բարելավում: Այդ համատեքստում ներառվում են գործող նորակառույց համակարգի

պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործում, համակարգում տեխնոլոգիական նորույթների կիրառմամբ ծախսերի իջեցում, հեռավերահսկման համակարգերի ընդլայնում: 2015թ. նախատեսվում է քաղաքի ջրահեռացման ցանցի ստեղծման աշխատանքների իրականացում, շուրջօրյա ջրամատակարարման ծրագրի ավարտում /Սարին թաղ և Բարեպաշտ թաղամասերի ջրագծերի կառուցում և շուրջօրյա ջրացանցին՝ միացում/: Հասարակության հետ կապն ավելի թափանցիկ դարձնելու նպատակով, համացանցում նախատեսվում է մատչելի կայքէջի ստեղծում, ինչպես նաև ծրագրվում է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում առաջացած խնդիրների կամ ժամանակավոր ջրանջատումների մասին՝ ջրօգտագործողներին ավանդական, կանխավ տեղեկացում՝ ՄՄՍ հաղորդագրությունների միջոցով:

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ այսօրվա դրությամբ բազմաբնակարան շենքերի սպասարկման, ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև աղբահանման ծառայության դիմաց գործող սակագները չեն համապատասխանում կատարված ծախսերին, ինչի պատճառով ընկերությունները հաճախ հայտնվում են ֆինանսական ծանր վիճակում և, բնականաբար, չի հաջողվում լիարժեք սպասարկում ապահովել:

Տարին արդյունավետ է հանդիսացել «Ակադեմիկոս Թախթաջյանի անվան բուսաբանական այգի» ՓԲԸ համար: Քաղաքի տարբեր փողոցներում իրականացվել են կանաչ գոտիների և տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ: 2014թ. նախորդ տարվա համեմատ կանաչ գոտիներն ընդլայնվել են ավելի քան 4 հազար քառ.մետրով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ոռոգման ցանցերի ընդլայնման, նորերի ստեղծման լայնածավալ աշխատանքներ, ինչն իր հերթին նպաստել է կանաչ տարածքների բարելավմանը: Ընդհանուր առմամբ մայրաքաղաքում տնկվել են 250 տեղական, 1000 հողանդական տեսակի վարդի թփեր: Կատարվել է ավելի քան 28 հազար ներմուծված տարբեր տեսակի ծաղիկների սածիլների տունկ: Ընդհանուր առմամբ մայրաքաղաքի տարբեր սիզամարգերում հողին է պահ տրվել 520 հազար ծաղկի սածիլ: Անցկացված համայնքային շաբաթօրյակի շրջանակներում ծառատնկման ակտիվ աշխատանքներ են կազմակերպվել «Աջափնյակ» թաղամասում: Քաղաքապետի համապատասխան որոշումների համաձայն ընկերության կողմից կատարվել է 21 ծառահատում. 120 ծառ երիտասարդացվել է, 650-ը՝ ձևավորվել:

2014թ. «Արցախէներգո» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղի հետ համատեղ իրականացվել են մայրաքաղաքի փողոցների, բակերի, խաղահրապարակների, զբոսայգիների արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ: Մասնավորապես հիմնանորոգվել է Ազատամարտիկների, Կամո և Մաշտոցի փողոցների արտաքին լուսավորության ցանցը: Ստորգետնյա վթարային մալուխային գծերը փոխարինվել են օդային, մալուխային ժամանակակից նոր գծերով: Մայրաքաղաքի չլուսավորվող հատվածներում իրականացվել են համապատասխան մոնտաժային աշխատանքներ, տեղադրվել է թվով 100 նոր լուսատու և 60 հենասյուն: Առանձին փողոցներում հին լուսատուները փոխարինվել են նորերով: Հաշվետու ժամանակաշրջանում մայրաքաղաքի փողոցներում, բակերում և հարակից տարածքներում, ընդհանուր առմամբ վերանորոգվել է 1090 լուսատու:

### **Հողօգտագործում**

2014թ. հասարակական նշանակության, անհատական տների և արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար ընդունվել է թվով 448 որոշում, պետական /համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի

տրամադրման վերաբերյալ՝ 246 պայմանագիր: Հողամասի վարձակալության համար կնքվել է 6, հողամասի ու անշարժ գույքի առուվաճառքի տրամադրման վերաբերյալ՝ թվով 240 պայմանագիր: Անց է կացվել Ստեփանակերտ քաղաքի պետական սեփականություն համարվող հողամասերի թվով 4 բաց աճուրդ: ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության հետ համաձայնեցվել է կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման /ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների/ հաշվետվությունը, այն հաստատվել և ներկայացվել է ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի պետական կոմիտեի նախագահի և Ստեփանակերտի քաղաքապետի համատեղ հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ պետական գրանցման ժամանակ առաջացած սահմանային անճշտությունների վերացման նպատակով:

Մայրաքաղաքի հեռանկարային զարգացման ծրագրով 2009թ. Ասկերանի շրջանի Խնածախ համայնքից Ստեփանակերտի համայնքին է հատկացվել 174.0 հեկտար հողատարածք: Սակայն առայսօր չլուծված է մնում Խնածախի համայնքի և առանձին սեփականատերերի փոխհատուցման հարցը /ընդհանուր գումարը կազմում է 155.0 մլն դրամ/, ինչի պատճառով հնարավոր չէ իրագործել նշված տարածքի հետագա կառուցապատման ու շահագործման աշխատանքները: Այդ համատեքստում՝ Նոր Արեշ, Աջափնյակ և 38-րդ թաղամասերում կառուցապատումը բնականոն կերպով շարունակելու համար անհրաժեշտություն է այդ թաղամասերի ենթակառուցվածքների /ճանապարհներ, ջրամատակարարում-ջրահեռացում, գազ, էլեկտրաէներգիա/ համալրումը:

### **Տրանսպորտ**

Ստեփանակերտ քաղաքում ուղևորափոխադրումներն իրականացվում են թվով 5 ավտոբուսային, 3 միկրոավտոբուսային և մեկ հատուկ երթուղիների միջոցով, որոնք պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Ստեփանակերտ-սերվիս» ՓԲԸ և «Մեք» ՍՊԸ-ի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում, ըստ անհրաժեշտության, համաձայն ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի, մի շարք երթուղիներում կազմակերպվել են շարժակազմերի համալրման աշխատանքներ: Ուսումնասիրվել և պարբերաբար ստուգվել են երթակարգավարական ծառայությունն իրականացնող ընկերությանը վերապահված պարտականությունները և տրվել համապատասխան ցուցումներ՝ երթակարգավարական ծառայության բարելավման, շարժակազմերի արդյունավետ օգտագործման և ուղևորափոխադրման որակի նորմատիվ մակարդակի պահպանման նպատակով:

Հաշվի առնելով վերջին տարիներին արձանագրված վառելիքաքսուկային նյութերի, ավտոպահեստամասերի զգալի գների աճը և Ստեփանակերտի ներքաղաքային ավտոբուսների՝ կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների հիմնավոր հաշվարկները, մրցութային հանձնաժողովի կողմից քննարկվել և կազմվել է մայրաքաղաքում ներքաղաքային երթուղիների փոխադրման սակագնի հաշվարկ-հիմնավորում, որի հիման վրա քաղաքապետի համապատասխան որոշմամբ, 2014թ. հոկտեմբերի 1-ից Ստեփանակերտի ներքաղաքային ավտոբուսների կանոնավոր փոխադրումների սակագինը մեկ ուղևորի հաշվով սահմանվել է 100 /հարյուր/ ՀՀ դրամ:

Մայրաքաղաքի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառների կահավորման (կանգառասրահների տեղադրման) աշխատանքներն հիմնականում իրականացվում են մասնավորի կողմից: 2014թ. ուսումնասիրվել են երթուղիների ուղեգծերում ընդգրկված կանգառների տեղամասերը և սահմանված կարգով Հ.Թումանյան և Ալ.Մանուկյան փողոցներում բնակիչներին տրամադրվել է համապատասխան հողատարածք՝ թվով 3 հատ կանգառ-կրպակ տեղադրելու



նպատակով: Նշված ժամանակահատվածում նախագուշակյան գրություններով իրագեկվել են նախկինում կանգառ-սրահ տեղադրելու թույլտվություն ստացած թվով 8 անձինք՝ մինչև 2015թ. ապրիլի մեկը նշված գործընթացն ավարտին հասցնելու պայմանով:

Հարկ է նշել, որ աշխատանքների կազմակերպման ժամանակ ծագում են խնդիրներ, որոնք խոչընդոտում են բնակչության առավել արդյունավետ սպասարկումը: Դեռևս լիարժեք համալրված չէ մայրաքաղաքի ավտոբուսային (միկրոավտոբուսային) հավաքակազմը, հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը շարունակում է ցածր մնալ: Փոխադրումների կազմակերպման գործընթացում անհրաժեշտ է ուժեղացնել տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը՝ հաստատված չվացուցակների պահանջների կատարման, երթուղու ուղեգծի ինքնակամ շեղումների, ավտովարորդների հարգալից վերաբերմունքի և ուղևորների անվտանգ սպասարկման վերաբերյալ:

Պետք է արձանագրել, որ դեռևս մեզ չի հաջողվել ապահովել բնակչության տրանսպորտային սպասարկման պատշաճ մակարդակ: Դրա հիմնական պատճառներն են՝

-անհրաժեշտ քանակությամբ ավտոբուսների բացակայությունը /գործում է 35 ավտոբուս, մինչդեռ պահանջվում է 45-ը/,

-փոխադրող ընկերությունների կողմից երթուղիներում շարժակազմերի աշխատանքային գրաֆիկների հաճախակի խախտումները,

-բնակչության սպասարկման պատշաճ մակարդակի բացակայությունը:

Մայրաքաղաքի մի շարք թաղամասերի ճանապարհների բարելավման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության <<Արցախուղի>> ՓԲԸ-ի կողմից շարունակվել են ծայրամասային փողոցների բարեկարգման և կոպճապատման աշխատանքները: Ճանապարհային երթևեկության բարելավման և անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով, ինչպես նաև՝ համաձայն Ստեփանակերտ քաղաքի լուսացույցերի սպասարկման պայմանագրի, ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության համապատասխան մասնագետների հետ վերահսկվել են քաղաքում գտնվող լուսացույցային օբյեկտների վերանորոգման և սպասարկման աշխատանքները: Մկրտչյան-Անդրանիկի-Մամիկոնյան խաչմերուկում տեղադրվել է լուսադիոդային նոր, ժամանակակից լուսացույցային օբյեկտ: Մամիկոնյան-Լուսավորիչ և Ազատամարտիկների-Այվազովսկի խաչմերուկների լուսացույցային օբյեկտների վթարային մալուխային գծերը փոխարինվել են նորերով:

### **Աշխատանք և սոցիալական ծառայություն**

2014թ. նպաստ ստանալու նպատակով հաշվառման է վերցվել 1154 քաղաքացի: Ներկայումս պետական նպաստից օգտվում են 3359 անձինք, տարվա կտրվածքով վճարվել է 773467.8 հազ.դրամ: Հաշվառման են վերցվել և խնայբանկում հաշիվներ բացվել բազմազավակ ընտանիքներում ծնված 3-րդ և հաջորդ՝ 178 երեխաների համար: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման նպատակով հաշվառման է վերցվել 938 գործ և ֆինանսավորման գումարը կազմել է 207700.0 հազ.դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ամուսնության միանվագ նպաստի համար վճարվել է 150600.0 հազ.դրամ: Հիշարժան օրերի կապակցությամբ ԼՂՀ բնակչության առանձին խմբերի վճարվել է 89188.0 դրամ միանվագ գումար՝ 2231 ընտանիքի հաշվով: Առողջարանային բուժման և հանգստյան տների ուղեգրերից օգտվել են 292 անձինք: Միաժամանակ տրամադրվել են թվով 152 պրոթեզավորման պարագաներ, այդ թվում՝ թիկնասայլակ, լսողական սարք և այլն:

### **Առևտուր և ծառայություն**

2014թ. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 1419 թույլտվություն, որի դիմաց գանձվել է 30409.85 հազ. դրամ տեղական տուրք:

Առանց համապատասխան թույլտվության համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքը, առևտրի և հանրային սննդի օբյեկտները ժամը 24.00-ից հետո աշխատացնելը, բացօթյա և շրջիկ առևտուր իրականացնելը, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքը, ինչպես նաև մարդաստար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելը կանխելու նպատակով, պարբերաբար իրականացվել են ստուգայցեր և արդյունքում աճել է ինչպես թույլտվությունների թիվը, այնպես էլ համայնքային բյուջե մուտքագրված տեղական տուրքերի չափը:

Վարչական իրավախախտումները հայտնաբերելու նպատակով կատարված ստուգումների արդյունքում կազմվել է 6 արձանագրություն: Ոչ սահմանված տեղերում առևտրի իրականացումն արգելվել և կազմվել է թվով 20 արձանագրություն: Արդյունքում՝ ի հայտ է բերվել 51 իրավախախտում: Ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար հանձնաժողովի կողմից տուգանվել է 18 հոգի: Բարեկարգման կանոնները խախտելու համար տուգանքի է ենթարկվել 14 անձ, ինքնակամ շենք, շինություն կառուցելու համար՝ 4, ժամկետանց ապրանքներ վաճառելու համար՝ 5 և առանց թույլտվության տաղավար տեղադրելու համար 3 հոգի: Խանութներում և կրպակներում կատարվել է տեխնիկական հեղուկ վաճառող տնտեսվարող սուբյեկտների հաշվառում, իրականացվել տեղական տուրքի գանձում ու համապատասխան թույլտվության տրամադրում: Էլեկտրոնային շտեմարաններում պարբերաբար ճշտվել և թարմացվել են տնտեսվարող սուբյեկտների տվյալները, ինչը թույլ է տվել առևտրի և ծառայությունների ոլորտում ուժեղացնել հսկողությունը և բարձրացնել աշխատանքների արդյունավետությունը: Արդյունքում՝ զգալիորեն աճել է համայնքային բյուջե մուտքագրված տեղական տուրքերի չափը:

2014թ. քաղաքի հասարակական նշանակության օբյեկտներում աշխատանքներ են տարվել գովազդային միջոցները գործող կանոնների պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Արտաքին գովազդի օրինականացման հարցով դիմել և համապատասխան որոշումներ են ստացել թվով 90 գովազդատուներ, որից 60-ը՝ արտաքին գովազդ տեղադրելու համար: 16-ը՝ ուժը կորցրած է ճանաչվել: Քաղաքապետի որոշման համաձայն, մինչև մեկ ամիս ժամկետով թույլտվություն է ստացել 12 գովազդատու: Ստեփանակերտ քաղաքում տեղադրված և համապատասխան թույլտվություն ստացած գովազդատուների քանակը հասել է 70-ի: Հաշվետու ժամանակաշրջանում միաժամանակ իրականացվել է համայնքի փողոցներում տեղադրված ոչ պիտանի գովազդների ապամոնտաժման ծրագիր: Մասնավորապես ապամոնտաժվել են թվով 26 հատ գովազդային վահանակներ: Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքի մասով 2014թվականի հաստատված պլանը կատարվել է 184.7%-ով:

### **Հասարակական կարգի պահպանություն**

2014թ. ԼՂՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքային վարչության կողմից քաղաքապետարանին ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն: Համայնքում

կատարված իրավախախտումների մասին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրվել քաղաքապետին:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հրավիրվել է հանձնաժողովի 34 նիստ, որի ընթացքում կայացվել է 55 որոշում (անչափահասի գույքի օտարման, պատրոնաժ, խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու մասին), երեխաների շահերին վերաբերող դատական գործերով տրվել է 29 եզրակացություն: Երեխայի որդեգրման վերաբերյալ: Որպես որդեգրել ցանկացող անձի, տրվել է 8 դրական և 1 բացասական եզրակացություն, որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառվել է 2 հոգի:

Ստեփանակերտի քաղաքապետարանին կից անչափահասների գործերով հրավիրվել է հանձնաժողովի 9 նիստ, արդյունքում՝ 25 անչափահաս վերցվել է հաշվառման, իսկ 31-ը՝ հանվել հաշվառումից:

### **Պաշտպանություն**

Առաջնորդվելով 2014թ. քաղաքապետության հիմնական միջոցառումների պլանով, ինչպես նաև ՔՊ պետի ու ղեկավար մարմինների որոշումներով և կարգադրություններով, համապատասխան գործունեություն է ծավալվել Ստեփանակերտի ՔՊ համակարգում՝ բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրների լուծման ուղղությամբ: Ճշգրտվել է Ստեփանակերտի ՔՊ պլանը, խաղաղ ժամանակի ՔՊ ուժերի և միջոցների, բնակչության պատասպարման հաշվարկը:

Ստեփանակերտ քաղաքի ՔՊ ղեկավար կազմի, շտաբի ու ծառայությունների պետերի հետ անցկացվել է հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը Ստեփանակերտ քաղաքում՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման, հակառակորդի հարձակման ու հարձակման հետևանքների վերացման ժամանակ» թեմայով: Պատշաճ մակարդակով է անցել Ստեփանակերտ քաղաքի ՔՊ ղեկավար կազմի, շտաբի տարահանման մարմինների ու ՔՊ ծառայությունների պետերի մասնակցությամբ կազմակերպված շտաբային ուսումնավարժությունը, որը «Լավ» գնահատականի է արժանացել:

2014 թվականին, ընդհանուր առմամբ, Ստեփանակերտի քաղաքացիական պաշտպանության կողմից անցկացվել է 11 գորավարժություն:

Կառույցի կողմից բավարար աշխատանքներ են տարվել համայնքի տարածքում հակահրդեհային միջոցառումների ապահովման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում Ստեփանակերտում գրանցվել է 93 հրդեհի դեպք կամ նախորդ տարվա համեմատ հիշյալ արտակարգ պատահարների թիվը նվազել է 14-ով:

### **Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն**

2014թ. ԼՂՀ դատարաններում ապահովվել է Ստեփանակերտի քաղաքային համայնքի լիազոր ներկայացուցչի մասնակցությունը՝ դատական նիստերին: Ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի հարուցված 4 քաղաքացիական գործերով (վնասի հատուցման, իրավունքի ճանաչման և վերականգնման վերաբերյալ) հայցերը մերժվել են, 24 վարչական գործերով (հողհատկացման, բնակարանային հերթերի, սեփականաշնորհման վերաբերյալ) 15 հայցապահանջներ՝ ևս մերժվել են: 9 հայցապահանջների մասով հայցերը, որոնցից 5-ը՝ բնակհաշվառման արտոնյալ հերթացուցակներում ընդգրկվելուն է առնչվում, բավարարվել են:

2014թ. կտրվածքով ԼՂՀ նախագահի և կառավարության աշխատակազմերից, ԼՂՀ Ազգային ժողովից և ԼՂՀ պետական այլ կառույցներից, ինչպես նաև քաղաքացիներից ստացվել են 3028 գրություններ և դիմում-բողոքներ: Նշված ժամանակահատվածում

ընդունվել է քաղաքապետի 2075 որոշում և 226 կարգադրություն, համայնքի ավագանու 110 որոշում: Ամենատարբեր հարցերով քաղաքապետի մոտ ընդունելության է գրանցվել շուրջ 950 քաղաքացի: Այլ կառույցներից և կազմակերպություններից մուտաքգրվել է 2463 գրություն:

Տարվա կտրվածքով մուտքագրվել են ԼՂՀ 107 օրենք, ԼՂՀ վարչապետի և կառավարության 86 որոշում, ԼՂՀ վարչապետի 2 արձանագրային հանձնարարականներ, որոնք սահմանված կարգով ծանոթացման են ներկայացվել աշխատակազմի պատասխանատու աշխատողներին և իրականացման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Սահմանված կարգով ժամանակին հաշվառվել են ելից գրությունները, կազմակերպվել վերջիններիս առաքումը հասցեատերերին:

Իրականացվել են քաղծառայողների վերապատրաստման, ատեստավորման և մրցույթի կազմակերպման հետ կապված աշխատանքներ: Ընդ որում, անց է կացվել թվով 3 մրցույթ, ատեստավորվել 8 քաղծառայող, 10 քաղծառայողներ անցել են վերապատրաստման դասընթացներ:

### **Կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ**

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել սովորողների կրթության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, հիմնարկների նյութատեխնիկական բազան հարստացնելու, նոր տեխնոլոգիաների մուտքը համակարգ՝ խթանելու, ուսումնական պարապմունքների, արտադասարանական-արտադպրոցական և սպորտային միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձնակի հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ՝ աշակերտների շրջանում հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով, կազմակերպվել են օլիմպիադաներ՝ 13 ուսումնական առարկաներից, որոնց արդյունքներով քաղաքային փուլում 48, հանրապետական փուլում 27, իսկ ՀՀ-ի եզրափակիչ փուլում՝ 14 մասնակիցներ գրավել են մրցանակային տեղեր, խրախուսվել գովասանագրերով, պատվոգրերով և դիպլոմներով:

Կրթական հաստատությունները հիմնականում ապահովված են բարձրագույն մանկավարժական և համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող կադրերով. աշխատող 942 մասնագետներից 883-ն ունեն բարձրագույն, իսկ 59-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Ուսուցիչների մասնագիտական, մեթոդական ու մանկավարժական վարպետության բարձրացման նպատակով շուրջ 300 ուսուցիչ-մասնագետներ ընդգրկվել են վերապատրաստման դասընթացներին: Ուշադրության կենտրոնում են գտնվել սովորողների հայեցի դաստիարակության ուղղությամբ տարվող հարցերը: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ սովորողների գիտական մակարդակի բարձրացման, նրանց գիտակցական կարգապահության, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակության ապահովման նպատակով: Անց են կացվել «Վերջին զանգ», «Առաջին զանգ», «Ուսուցչի օր», «Ոսկե աշուն», «Մայրենիի օր», «Այբուբենի տոն», «Անկախության օր», «Ստեփանակերտի օր», ինտելեկտուալ խաղեր, ասմունքի ու ստեղծագործական շարադրությունների մրցույթներ և այլ տարաբնույթ միջազգային մրցույթ է կրել «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն զինղեկ», «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթների քաղաքային փուլերի կազմակերպումը, որի արդյունքներով հաղթող ճանաչվածները խրախուսվել են:

Կազմակերպված է անցել դպրոցականների ամառային հանգիստը: Հ 5 և հ 10 դպրոցների բազայի վրա ստեղծվել են ամառային ճամբարներ, որտեղ ընդհանուր հաշվով հանգստացել են 440 երեխաներ: Բարձր դասարանների տղաներն իրենց հանգիստն

անցկացրել են Այգեստանի <<Վարդանանք>> ճամբարում, իսկ զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների 11 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հունաստանում:

Հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի հետ ուշադրության կենտրոնում է գտնվել սովորողների ֆիզիկական դաստիարակության, նրանց շրջանում սպորտի և ռազմամարզական խաղերի հետագա մասսայականացման հարցերը: Այդ նպատակով կազմակերպվել ու անց են կացվել տարաբնույթ քաղաքային առաջնություններ և մրցույթներ, որտեղ մեր մարզիկները գրավել են մրցանակային մի շարք տեղեր:

Ընդհանրացվել են ուսումնական հաստատությունների տնօրինությունների, առարկայական մեթոդավորումների կողմից կատարված աշխատանքները, քննարկվել ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունում՝ ուր մատնանշվել են անելիքներն ու խնդիրները նոր՝ 2014-2015 ուս.տարում: Ի մի բերելով 2014-ի արդյունքները և կանխանշելով անելիքները, 2015 թվականին առաջնահերթ են մնում նախադպրոցական և արտադպրոցական ցանցի ընդլայնման, հաստատությունների /մասնավորապես հհ. 9 և 10 հանրակրթական դպրոցների/ հիմնարար վերանորոգման, հիմնարկների նյութատեխնիկական բազան ամրապնդելու, նոր տեխնոլոգիաների մուտքը համակարգ՝ խթանելու, ուսուցիչ-անհատի՝ որպես կրթության և դաստիարակության կենտրոնական դեմքի, հեղինակության, սոցիալական վիճակի և մանկավարժամեթոդական մակարդակի բարձրացման հարցերը: Նախադպրոցական ցանցի ընդլայնման նպատակով մասնավորապես առաջարկվում է մայրաքաղաքի 12-րդ դպրոցի շենքում բացել նաև նախադպրոցական խմբեր:

2014 թվականին հազեցած է եղել նաև մայրաքաղաքի մշակութային կյանքը: ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ քայլեր են ձեռնարկվել մշակութային միջոցառումների որակի բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, իրականացվել են մի շարք նոր ծրագրեր: Պատշաճ մակարդակով են անցել Ամանորին, Հայրենյաց պաշտպանի և Արցախի Վերածննդի օրվան, Մայիսյան եռատոնին, ԼՂՀ անկախության հռչակման տարեդարձին, Ստեփանակերտի օրվան նվիրված միջոցառումները: Այդ կապակցությամբ կազմակերպվել են երգի և ասմունքի փառատոներ, տոնական համերգներ, տարբեր ցուցահանդեսներ: Ավանդույթ է դարձել երիտասարդական արշավների կազմակերպումը՝ Արցախի պատմամշակութային հուշարձաններ ու վանքեր, որոնք վերածվում են յուրահատուկ ուխտագնացության:

Գործուն աջակցություն է ցուցաբերվել Մուրացանի անվան քաղաքային գրադարանի՝ 50-ամյակին նվիրված հոբելյանի տոնակատարությանը: Շարունակվել է ակտիվ համագործակցությունը՝ մայրաքաղաքում գործող երիտասարդական ստեղծագործական և հասարակական կազմակերպությունների հետ:

### **Ֆիզիկական կուլտուրա և սպորտ**

2014թ. մարզական միջոցառումներն իրականացվել են նախապես հաստատված աշխատանքային օրացուցային պլանով: Տարբեր մարզաձևերից քաղաքային առաջնություններում առաջնակարգ տեղեր գրաված թիմերը մասնակցել են հանրապետական մրցումներին: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են բասկետբոլի գծով սեմինար պարապմունքներ՝ քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչների և բասկետբոլի հավաքական թիմերի անդամների մասնակցությամբ: Քաղաքում ավանդական են դարձել հիշարժան օրերին նվիրված տոնական մարզական միջոցառումները, որոնք մասնավորապես անց են կացվում Հայրենիքի պաշտպանի օրվա, Մայիսյան եռատոնի, ֆիզկուլտուրնիկի և քաղաքի օրվա

կապակցությամբ: Անցած ժամանակաշրջանում անցկացվել են 24 մարզական միջոցառումներ՝ բասկետբոլի, վոլեյբոլի, հանդբոլի, մինի ֆուտբոլի գծով: Ստեփանակերտ քաղաքում միաժամանակ կազմակերպվել են մարզական փառատոներ և «Լավագույն մարզական ընտանիք» մրցումներ: Կուլեկտիվների միջև կազմակերպվել են բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի թիմային մրցումներ. որտեղ ի հայտ են բերվել Ստեփանակերտի լավագույն թիմերը: Նրանք մասնակցել են հանրապետական առաջնություններին, իսկ ստուգատես մրցույթում՝ գրավելով 1-ին պատվավոր տեղը, պարգևատրվել են նվերներով ու պատվոգրերով:

### **Արտաքին կապեր**

Տարեցտարի ավելի է ընդլայնվում մայրաքաղաքներ Երևանի և Ստեփանակերտի միջև սկզբնավորված համագործակցությունը, բոլոր ուղղություններով ավելի են սերտանում կապերը: Երևանի քաղաքապետարանն ակտիվ աջակցություն է ցուցաբերել քաղաքային տնտեսությանը՝ կառավարման ոլորտում: Այն իր փորձն է հաղորդել քաղաքապետարանի բաժիններին՝ գործառույթների կատարելագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, հարկային դաշտի ուսումնասիրման գործում: Աշխատանքներ են տարվել գույքային հարկերի հաշվառման բազաներում գործընթացների պարզեցման, մի շարք հաշվետվական ձևատեսքերի ստացման և համապատասխան տեխնիկական առաջադրանքների մշակման ուղղությամբ: Երևանցի գործընկերների աջակցությամբ լուրջ տեղաշարժեր են արձանագրվել գույքահարկի և հողի հարկի, մատուցված ծառայությունների դիմաց վճարների գանձման, համայնքային բյուջեի համալրման բնագավառներում, համայնքային գույքի կառավարման կատարելագործման, իրավական խնդիրների հստակեցման ուղղությամբ: Արգասաբեր կարելի է որակել Երևանի քաղաքապետարանի «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի և «Շտապ բուժօգնություն» ընկերության կողմից Ստեփանակերտի բժշկական հաստատություններին ցուցաբերած բուժօգնությունը, ինչը շարունակական բնույթ է կրում:

2014թ. համագործակցության շրջանակներում պատվիրակությունների կողմից թվով 8 փոխայցելություն է կատարվել: Երևանի քաղաքապետարանը Ստեփանակերտի քաղաքապետարանին է նվիրել թվով 150 նստարան, տեղեկատվական շտեմարան ծրագրով համալրված ժամանակակից համակարգիչներ: Երևանի վարչական մի շարք շրջանների կողմից մայրաքաղաքի նախադպրոցական հիմնարկներին նվիրաբերվել են երաժշտական կենտրոն, համակարգիչներ, խոտհնձիչ ագրեգատներ և այլն: Ստեփանակերտցիների համար հաճելի երևույթ էր Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ուսանողների՝ վարդագույն տուֆից կերտած քանդակների տեղադրումը Ստեփանակերտի պուրակներում և քաղաքի տեսարժան այլ վայրերում: Ուշագրավ է և այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի ձեռնարկմամբ Ստեփանակերտում սկսվել են «Ազատամարտիկների այգու» հիմնադրման աշխատանքները: Հանգստի գոտին, որ կամբողջանա ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, յուրահատուկ նվեր կհանդիսանա ստեփանակերտցիների համար և կխորհրդանշի Արցախյան ազատամարտում նահատակված հայորդիների հիշատակը: Երևանի քաղաքապետարանը ստանձնել է նաև մայրաքաղաքում կառուցվող Աստվածամոր Սուրբ Հովանի մայր տաճարի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքները:

Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Քաղաքապետ